Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

1921 թ.

# „ՎԱՀԱԳՆ“

ՕԿԱՈՒՑԻ

# ՕՐԱՑՈՅՑ

կազմեց

ՄԵԼԻՔՍԵԹ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

ԹԻՖԼԻՍ

# ՎԱՀԱԳՆԻ ԾՆՈՒՆԴԸ

Երկնեց երկին և երկիր,
Երկնեց և ծով ծիրանի,
Եվ եղեգնիկը կարմիր
Երկնեց ծովում ծիրանի։

Ծուխ է դուրս գալիս եղեգան փողից
Բոց է դուրս գալիս եղեգան փողից.
Բոցն է պատել կարմիր եղեգնիկ,
Բոց է դարձել և ծով ծիրանի.
Կարմիր բոցից ահա մի մանկիկ։
Վահագն ահա—մանուկ դեղանի։

Բոց մորուքով,
Հուր շրթունքով.

Հուր հեր գլխին—հրեղեն պսակ,
Եվ աչերն են զույգ արեգակ։
Ալեծուփ ծովի ծիրանի ալիք,
Գնում են գալիս, ծեծում են ափունք,
Անհեղամաունչ գոռում է մանկիկ,
Սաստում է ալեացն հրավառ շրթունք։

Վահագն ծնա՜, լռեցէք, ալիք,
Դու ծովահալած, դադար առ, մրրիկ.
Թեւերն ոսկէ հուր, հրահեր բաշով
Նժոյգը տակին՝ սլացաւ վերև—
Երեսըդ ծածկիր համեստ շղարշով
Տե՛ս, նա՛ է գալիս, և դու, հուր-արև,
Գլուխդ ալևոր, քաջածին Մասիս,
Դու էլ խոնարհիր, Վահագն է գալիս։
Երկինք ու երկիր և ծիրանի ծով
Աւետում են քեզ, ցաւերի դու ծով՝
Ցնծա՛, բիւր միշտայ․ Հայաստան աշխարհ,
Փրկութեան արև Վահագնից տեսար։

Ե. Եոփէ.

Ձմեռ—դեկտ. 22—մարտի 22

Ն. Տ. » 22-ից օրը երկարում է

մարտի 22-ին գիշերը=ցերեկին

ԴԵԿՏԵՄԲԵՐ 31 օր

Յօնածառի պատրաստութիւն

| Օրեր Ամիս. | Բ շբ | Գ շբ | Դ շբ | Ե շբ | Ուր բաթ | Շա բաթ | Կի րակ. |
|---|---|---|---|---|---|---|---|
| ՅՈՒՆՎԱՐ 1—31 օր | — | — | — | — | — | 1 | 2 |
| | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 |
| | 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 | 23 |
| | 24 | 25 | 26 | 27 | 28 | 29 | 30 |
| | 31 | — | — | — | — | — | — |
| ՓԵՏՐՎԱՐ II—28 օր | — | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 |
| | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 |
| | 21 | 22 | 23 | 24 | 25 | 26 | 27 |
| | 28 | — | — | — | — | — | — |
| | — | — | — | — | — | — | — |

Յ ո ւ շ ա ր ա ն

Ի՞նչեմ անելու կամ ի՞նչ արէ —

Ամառ—Յունիսի 22-ից—սեպտ. 23-ը

Ն. Տ. » 22-ից օրը կարճանում է

սեպտ. 23-ին ցերեկը=գիշերին

| Օրեր / Ամիս. | Բ շբ. | Գ շբ. | Դ շբ. | Ե շբ. | Ուրբաթ | Շաբաթ | Կիրակի |
|---|---|---|---|---|---|---|---|
| ՅՈՒՆԻՍ VI—30 օր | — | — | 1 | 2 | 3 | 4 | 5 |
| | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 |
| | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 |
| | 20 | 21 | 22 | 23 | 24 | 25 | 26 |
| | 27 | 28 | 29 | 30 | — | — | — |
| | — | — | — | — | — | — | — |
| ՅՈՒԼԻՍ VII—31 օր | — | — | — | — | 1 | 2 | 3 |
| | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 |
| | 18 | 19 | 20 | 21 | 22 | 23 | 24 |
| | 25 | 26 | 27 | 28 | 29 | 30 | 31 |
| | — | — | — | — | — | — | — |
| ՕԳՈՍՏՈՍ VIII—31 օր | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 |
| | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 | 21 |
| | 22 | 23 | 24 | 25 | 26 | 27 | 28 |
| | 29 | 30 | 31 | — | — | — | — |
| | — | — | — | — | — | — | — |

Յուշարան

Ի՞նչ եմ անելու կամ Ի՞նչ արի—

Աշուն—Սեպտ. 23—դեկտ. 22

Ն. Տ. » 23-ից գիշերը երկարում է

Դեկտ. 22-ին ամենակարճ գիշերը

| օրեր / Ամիս. | Բ շբ | Գ շբ | Դ շբ | Ե շբ | Ուրբաթ | Շաբաթ | Կիրակ. |
|---|---|---|---|---|---|---|---|
| ՍԵՊՏԵՄԲԵՐ IX—30 օր | — | — | — | 1 | 2 | 3 | 4 |
| | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
| | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 |
| | 19 | 20 | 21 | 22 | 23 | 24 | 25 |
| | 26 | 27 | 28 | 29 | 30 | — | — |
| | — | — | — | — | — | — | — |
| ՀՈԿՏԵՄԲԵՐ X—31 օր | — | — | — | — | — | 1 | 2 |
| | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 |
| | 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 | 23 |
| | 24 | 25 | 26 | 27 | 28 | 29 | 30 |
| | 31 | — | — | — | — | — | — |
| ՆՈՅԵՄԲԵՐ XI—30 օր | — | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 |
| | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 |
| | 21 | 22 | 23 | 24 | 25 | 26 | 27 |
| | 28 | 29 | 30 | — | — | — | — |
| | — | — | — | — | — | — | — |

# Յուշարան

Ի՞նչ եմ անելու կամ ի՞նչ արի —

Ձմեռ—Դեկտ. 22—մարտի 22

Ն. Տ. » 22 ից օրը երկարում է

Մարտի 22-ին գիշերը=ցերեկին

| Օրեր Ամիս. | Բ շբ | Գ շբ | Դ շբ | Ե շբ | Ուրբաթ | Շաբաթ | Կիրակի |
|---|---|---|---|---|---|---|---|
| Դեկտեմբեր XII—31 օր | — | — | — | 1 | 2 | 3 | 4 |
| | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
| | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 |
| | 19 | 20 | 21 | 22 | 23 | 24 | 25 |
| | 26 | 37 | 28 | 29 | 30 | 31 | — |
| | — | — | — | — | — | — | — |
| 1922 թ. Յունուար 31 օր | Շնորհաւոր ՆՈՐ ՏԱՐԻ | | | | | | 1 |
| 1922 թ. Փետրուար 28 օր | | | | | | | |

# ՏՕՆԵՐ

*Դպրոցական*

Յունւ. 1-ին—Նոր—տարի.

" 6-20—Ծննդեան արձակուրդ

Մարտի 10-ին—Վարդանանց տօն

" 11-13 – Բարեկենդան

Մարտի 12-ին—Ռուս. Մեծ Յեղափ. տարեդ.

Ապրիլ 16-ին—Գրիգոր Լուսաւորիչ

Ապրիլի 24-3 մայիսի—Զատկ. արձակուրդ

Մայիսի 1-ին—Աշխատանքի տօն (միջազգ.)

" 26-ին –Վրաստ. անկախութիւն

" 28 ին—Հայաստ. անկախութիւն

Յունիսի 9-ին—Համբարձում։

Հոկտ. 23-ին—Թարգմանչաց տօն։

Դեկտ. 12-ին – Գվարդիայի տօն։

—

## Սկաուտական*) կազմակերպութեան նպատակը

1.—Զարգացնել մատաղ սերնդի ֆիզիքական, բարոյական և մտաւոր ընդունակութիւնները ներդաշնակ և համաձայն նրա հոգեբանական պահանջների։

2.—Կազմակերպել նրա բնաւորութիւնը,

3.—Պատրաստել նրան ապագայի համար պիտանի քաղաքացի։

---

Այս նպատակին հասցնողը աշխատանքն է, որի անդրանիկ պտուղներն են—առողջութիւնը, հոգու կորովութիւնը, սրտի խաղաղութիւնը և առաքինութիւնը։

---

*) Սկաուտ (scout) անգլիերէն բառ է. նշանակում է սահմանագիծը պահպանող զինւոր, որ միշտ արթուն է, կարիճ և զգայարաններով լաւ մարզուած։

## ՍԿԱՈՒՏԻ ՆՇԱՆԱԲԱՆՆ Է

### բարձրանալ և բարձրացնել

---

Սկաուտը բարձրանում է, երբ խոսքը հետևում է իր դաւանանքին, և բարձրացնում է ուրիշին, երբ իր անձնական օրինակով գրաւում է նրան և բարի նախանձ շարժում նրա մէջ Սկաուտ լինելու։

---

## ՍԿԱՈՒՏԻ ԴԱՒԱՆԱՆՔԸ

1.—Սկաուտի խօսքը նուիրական է։

2.—Սկաուտը հնազանդ է։

3.—Սկաուտը հաւատարիմ է։

4.—Սկաուտը ուղղամիտ է։

5.—Սկաուտը միշտ կօգնէ ուրիշին։

6.—Սկաուտը բարեկամ է ամենքին, և եղբայր միւս բոլոր սկաուտներին։

7.—Սկաուտը բարեկիրթ է։

8.—Սկաուտը պաշտպանում և սիրում է։

---

կենդանիներին։

9—Սկաուտը միշտ զուարթ է և խանդավառ։

10—Սկաուտը աշխատասէր է և կորովի։

11—Սկաուտը տնտեսող է։

12—Սկաուտը մաքուր է. մտքով, խօսքով և գործով։

—

## Վահագնի Հիմնը

Ո՛վ հայ որդի, նախ բարձրացիր.
Մարմնով, մտքով հսկայ դարձիր,
Ջանք, ճիգ թափէ՛ դուն ամեն օր
Գործադրելու բարիք մը նոր։
Հաւատարիմ ազնիւ խօսքիդ
Թշուառութեան դէմ ոչ անփոյթ.
Ազգիդ համար միշտ աշխատէ,
Եղիր բարի, ոչ ոք ատէ՛։
Յարգ ունեցիր մեծերուդ միշտ,
Մի՛ պատճառեր ոչ ոքի վիշտ,
Ամուր պահէ՛ երդումդ սուրբ,
Քաղաքավար եղիր ու նուրբ։

—

Ո՛վ հայ արի, նախ բարձրացի՛ր,
Մարմնով, մտքով հսկայ դարձիր,
Ջանք, երգ թափէ դուն ամէն օր
Բարձրացնելու սերունդը նոր։

Բ. Ծաղասունի։

---

## Հայ Արին

Հայ արի եմ, հայ արի,
Զուարթ, աշխոյժ ու բարի,
Փոքրիկ մի հեզ պատանի
Կուզեմ լինել պիտանի.
    Հայ արի եմ, հայ արի
    Նպատակս է յոյժ բարի։
Գործերիս մէջ ուղղամիտ,
Ժիր, անդուլ և բարեմիտ,
Հաճոյք է ինձ աշխատանք
Չեմ խնայել ոչ մի ջանք։
    Հայ արի եմ, հայ արի,
    Ծառայութիւնն ինձ առնել։
Կօգնեմ ես խեղճ տկարին,
Կառաջնորդեմ ընկերին, . . .

---

Դուանականքս այս սուրբ է,
Ես չեմ դրժիլ իմ ուխտին։
Հայ արի եմ, հայ արի,
Սուրբ ուխտս ինձ հաճելի,
Ազգ, ընկեր և հայրենիք,
Ասոնք են իմ ընտանիք.
Որոնց որդին հարազատ,
Պիտի ապրիմ միշտ ազատ
Հայ արի եմ, հայ արի
Նախնի քաջաց թոռնորդի
Քայլեմ յառաջ միշտ զուարթ,
Անյետադարձ ու անխախտ.
Սեւեռուն է Արարատ,
Հոգւովս արտով դիմեմ անդ։
Հայ արին է թռչող արի,
Նպատակին ուղիղ փարի,
Վեհ ճակատով ես ծուռ գամ,
Մարմնով մաքրով զարգանամ,
Բարձրացնեմ, բարձրանամ,
Վեհ ազգիս պարծանք ըլլամ։

Արի՛ արանց հայ արի,
Դրօշակս է պանծալի։

Գառլօ Պետրոսեան

—

# Հրաւէր

## Ձօն Նորազատ Հայաստանին

Հա՛պօն, յառա՛ջ հայ արիներ,
Դէպի Երկիր աւերակ.
Ցանկալու հոն կանանչ յոյսեր
Մեր ձեռքով բուրանակ։
Դէպի Մասիս, հայ մարտիկներ
Հապօն, քալենք անվարան,
Թող բողբոջին կոյս ծաղիկներ
Դրօշնուս տակ անսասան։

Յառա՛ջ, յառա՛ջ դէպի Երկիր
Առաջնորդներ «լուսատու».
Հայաստանի ճակատին կարմիր
Կանանչ նարօտ կապելու։
Հա՛պօն, յառա՛ջ հայ արիներ
Դէպի Երկիր աւերակ
Ցանկալու հոն կանանչ յոյսեր
Բազուկներով բարունակ։

Ճանիկ

## Սկաուտի օդացոյցը

### Անձրև գուշակելու միջոցներ

1. Երբ թոյլ պարան մը կըպրկուի
2. Երբ կրակին ծուխը դէպի վար կը հակի
3. Երբ արևը առաւօտուն կարմիր է.
4. Երբ արևմուտը դեղնագոյն կամ կանաչագոյն է.
5. Երբ մարգագետինը ցօղով թրջած է, երբեք անձրև չի տեղար.
6. Երբ գիշերը մարգագետին չոր է, առաւօտէն առաջ կանձրևէ.
7. Երբ առաւօտուն մարգագետինը չոր է, օրուան միջոցին կանձրևէ.
8. Երբ առաւօտուն ժամը 7-էն առաջ անձրևէ, ընդհանրապէս ժամը 11-էն առաջ պայծառ օր կունենանք:
9. Առաւօտուն խիտ մշուշը, ընդհանրապէս պայծառ օր կը նշանակէ:

10. Լուսնի բոլորտիքը շրջանակ մը փոթոր-կի նշան է։

11. Արևելեան հովով անձրևը երկարատև է։

12. Ցանկարծակի տեղատարափը շուտով կը դադրի։

13. Ծանր-ծանր տեղացող անձրևը երկա-րատև է։

14. Արևելեան հովը անձրև կը բերէ։

15. Արևմտեան հովը պայծառ և զով օդ կապահովէ։

16. Հիւսիսային հովին կընկերանայ ցուրտը։

17. Հարաւային հովը տաք կը փչէ։

---

Հովի ուղղութիւն իմանալը—

Թուք մատը լաւ ծծել ու թրջել ամբող-ջութեամբ և բռնել հովի մէջ, թուք մատը որ կողմը ցուրտ զգայ՝ հովը այն կողմէն կը փչէ։

Թարգմ. Ս. Կ.

## Ինչպէս զգուշանալ գիշերային յարձակումներից

Երբ ուշ ժամանակ տուն կը վերադառնաք ամայի և վատ լուսաւորուած կամ մութ փողոցներով՝ պէտք է հետևեալ զգուշութիւնները ձեռք առնել.

1. Ճամբի մէջտեղով քայլել. գողերը և թափառաշրջիկները ներս քաշուած դռների կամ պատերի անկիւններում կը թաքնուեն։

2. Բնաւ թոյլ մի տաք, որ ձեզ անծանօթ մօտենայ կրակ ուզելու կամ ժամը հարցնելու պատրուակով. այդպիսիներին պատասխանեցէք հեռուից։

3. Թոյլ մի տաք, որ անծանօթ ձեզ հետևի։

4. Երբ անծանօթ ձեզ վրայ կը յարձակուի, խոյս տուէք հարուածից՝ մէկ կողմը քաշուելով. աշխատեցէք նրան գետին ձգել՝ ոտքը կարթելով. եթէ մենակ էք սկսեցէք վազել, որովհետև սրիկայի հարուածից խոյս տալը ամօթ չէ։

5. Ուշադիր եղէք, թէ հետեւող կամ հետեւողներ չկան ձեզ կամ թէ դրանք կփորձեն ձեզ մօտենալ։

6. Հետաքրքրութիւնից մղուած բնաւ չմօտենաք իրար հետ կռուողներին, նոյնպէս և զուարճախօս հարբածներին. կարող են դիտմամբ եղած լինեն՝ իրենց մօտեցող միամիտներին թակարդ ձգելու համար. Նոյնպէս մի աշխատէք կռուողներին իրարից բաժանել։

Թարգմ. Օ. Ս. Քիւչիւքեան

—

## Ինչպէս պէտք է գործել հրդեհի սկզբին

1. Օգնութեան կանչէք։

2. Մի խորտակէք դռները և պատուհանները և կամ բաց մի թողէք նրանց. կրակը բաց օդից հեռու պահեցէք մինչև հրդեհաշէջների գալը։

3. Եթէ կրակը գիշերը պատահի՝ անմիջապէս բոլորին արթնացրէք, կենդանինե-

րին ազատելու համար աչքերը կապեցէք, որ տարածւող բոցերը չտեսնեն։

4. Ծխննելոյզից կրակ երևալու դէպքում աղ ցանեցէք այնտեղ, ապա թաց շորով ծխննելոյզի բերանը փակեցէք, որպէսզի օդ չմտնէ մէջը։

5. Պէտք է գործել արագ և պաղարիւն. երբ գործողի հագուստին կրակ կպչի և ուրիշ օգնող չլինի, պէտք է գետին պառկի և գլորւի։

6. Լապտերը շուռ գալու դէպքում, երբ բոցերը երթալով կը տարածւեն, պէտք է մոխիր, աւազ, հող կամ ալիւր ցանել վըրան. փոքր տարածութեան վրայ բռնկած հեղուկների համար ամենալաւ միջոցն է գորգով ծածկել բռնկած տեղը։

7. Եթէ հրդեհի մէջ շրջապատւած էք ծխով՝ թաց սրբիչ կամ թաշկինակով ծածկէք երեսնիդ, այդպիսով. ազատ շունչ կը քաշէք։

8. Եթէ փախչելու ամեն ճամբան փակւել է՝ բարձրացէք տանիքը, որտեղից էլ

մոտիկ տանիքը կարող էք անցնել։

9. Պատուհանից թռէք ամենածայրայեղ դէպքում. առաջուց վար նետեցէք անկողին, գորգեր և նրանց վրայ թռէք։

Մ. Բ.

—

## Սկաուտական սուլիչի նշանները

1. Հաւաքում . . . . . .
2. Տարածուել — — — — —
3. Վտանգ .— .— .—
4. Խմբապետներ — — —
5. Փոխ-խմբապետներ .— .— .—
6. Առաջնորդներ . . . —
7. * Զարթնում — . . .
8. * Վրաններու տակ — . . . — . . .

—

## Քնի պատրաստութիւն

1. * Լոյսը մարէ — . . . — . . . — . . .

---

Ծանօթ.—Աստղանիշ կրողները փող չը գտնուած դէպքում միայն սուլիչ գործածել։

## Ընկլու սուլիչ

1. Ուշադրութիւն —
2. Պատրաստ .
3. Քայլ առաջ ծն . — .
4. Խումբ կանգ — .

—

Լաւ մարդկանց մեծ նշանը պարապ չմնալն է։

—

## «Վանազն» սկաուտական կազմակերպութեան սպայակոյտի կազմը

1. «Վանազն» սկաուտներու պետ՝
Ս. Մ ա ռ ո յ ե ա ն։
2. Օգնական և I-ին փաղանգի մարզանքի պետ
Ռ. Ջ ա ւ ա խ ե ա ն։
3. II-րդ փաղանգի և Գըրլ սկաուտներու մարզանքի պետ՝ Գ. Հ ա ջ ե ա ն։
4. II-րդ փաղանգի I-ին օղակի օղակապետ՝
Յարութիւն Չիլ-Յակոբեան
5. Գըրլ սկաուտներու I-ին օղակի օղակապետ՝
Սրբ. Յ ո ւ ն ի կ ե ա ն։

Սարն ի վեր Н 15126

. . . . . . . . . . . . . . . . .

Դեռ հեռու է կատարն անամպ ու յստակ,
Բայց եթէ չը հասնենք այնտեղ մենք այսօր
Վաղն այնտեղ ենք անշուշտ, մերն է յաղթա-
նակ —
Դէպի վեր, սարն ի վեր. անվեհեր զինուոր

Ց. Ցակ.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0055945

ЦЕНА
A I / 15126